— Զօր. Ադէօսէլ իր վերջին հեռագրին մէջ զոր երէկ հրատարակեցինք, յարած է նաեւ թէ ճաքոնցիք Վիսօքաես բլուրին բարձունքէն կը ռմբակոծէին նաւահանգստին մէջ խարխսած ռուս մարտանաւերը։ Այս Վիսօքաես բլուրը ուրիշ բլուր չէ, եթէ ոչ ճաքոնցիներուն «203 մէջր» կոչած բլուրը։ Պէտք է աւելցնել նաեւ թէ Զօր. Սթէօսէլ, իր վերջին հեռագրին, ինչպէս նաև նախընթաց հեռագրերուն մէջ կը յարէ թէ Բորթ Արթուրի պահապան զօրքերուն բարոյական ոգին լաւ է։

ԹՈՔԻՕ.— «Սթանտարտ» կ'իմանայ թէ Բորթ Արթուրի պահապան զօրքերուն կացութիւնը յուսահատական է։ Հիւսիս-արեւելեան ճակատին դէմ պաշարման աշխատութիւնները այնքան յառաջացած են որ ճաքոնցիք այժմ 12 մէջր միայն հեռի կը գտնուին ռուսական դիրքերէն։

ԼՈՆՏՈՆ.- Զիֆուէ կը հեռագրուի «Տէյլի Թէլէկրաֆ»ի.— Ճաքոնական նաւատորմին մէկ մասը Սինկաքուր մեկնեցաւ։ Ամսոյս 15ին, ճաքոնական 25 մարտանաւեր համախմբուած էին Տալնիի մօտ։ Ճաքոնական փոխադրանաւերը այժմ ամենքն ալ թնդանօթներով զինուած են։ Առեւտրական բազմաթիւ նաւեր ալ թեթեւապէս պիտի զինուին, որպէս զի կարենան ծովային պաշարման սպասարկութիւն կատարել, ճաքոնական այն մարտանաւերուն տեղ, որոնք ընդառաջ կ'երթան Պալթիկի նաւատորմին։

ՇԱՆԿԱՅ.— Ռիւդէր կը ծանուցանէ թէ ռուսական «Ռազդօրքնի» թորփիլանաւածին հրամատարը յաջողած է Վլատիվոսդոքէ փախչիլ անգլ. «Նիկրիդիա» շոգենաւով։ Ճաքոնցիք կը փնտռեն այս շոգենաւը։

ԼՈՆՏՈՆ.— Լոյտ շոգենաւային ընկերութեան լրագիրը հեռագիր մը ցուցաւ ծանուցանող թէ Պալթիկի նաւատորմը Քէյթդաունի առջեւէն (Բարեյոյս) անցաւ ծովակալ Ռօժտեստվենսքիի հրամատարութեամբ։

ԲԱՐԻԶ.— Տիկին Սիվթօն որ երէկ ընդունած էր որ իր ամուսինը անձնասպան եղած է, այսօր կը տարակուսի անոր վրայ, ազգայնականներու յայտնի ազդեցութեան տակ որոնք կ'ուզեն հաստատցնել թէ գործը ժողդասպանութեան մը շուրջը կը դառնայ։

ԿԱՂԱՆԴԻՆ ԻՆՉ ՆՈՒԷՐ ՏԱՄ ՈՐ ՅԱՐԳԻ ԱՆՑՆԻ

Մ Ի Ա Ց Ն

"ԺԱՄԱՆՑ ԿԱՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽԱՂԵՐ„ ԿԸ ԲԱՒԷ

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՍԻՍ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Երէկ գիշեր, ժամը 10ին Խմբագրութեան հասաւ հետեւեալ հեռագիրը. զոր ղրկած էր Սիսի մեր թղթակից Սողոմոն էֆ. Գուլումճեան։

ԳՕԶԱՆ, 7 Դեկտ.

Մանզուսէի Էֆֆեարի Խմբագրութեան,

«Ն. Կայս. Վեհափառութեան չնորհիւ Կիլիկիոյ Տ. Սահակ Ս. Կաթողիկոսը ողջմիտ Գոզան ժամանեց և Սիսի Մայրավանքին մէջ հանդիսաւոր բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին սրբազնութեանը համար։ Սիսի ամբողջ Հայ հաւատարիմ հպատակները ձայնակցեցան այս սրտաբուղխ բարեմաղթութեան։

ՍՈՂՈՄՈՆ»

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՊԱՏԻԿՆԵՐՈՒՆ ԿԱՂԱՆԴՋԷՔԸ

Հանրութիւնը միշտ աղբիւր կը հանդիսանայ գթասիրական բուռ զգացումներու, որոնք կ'արտայայտուին Հիւանդանոցիս և Ս. Յակոբայ Որբանոցին մէջ պատսպարուած անոր և ծնողազուրկ մանուկներուն հանդէպ զանազան քիչ մը ուրախացնելու համար Կաղանդի և Մնունդի զուարթ օրերուն։ Գթութեան այս վերաբերումին ամէնէն աւելի կը մասնակցին պզտիկները, որոնք իրենց փոքուկ կուրքերուն տակ երբ բաբախելը կը զգան արտերնուն՝ ոտնակոն օրերուն նորութիւնները և խրախճանքները յիշելով, չեն ուզեր նաեւ աչքէ հեռացնել Հիւանդանոցի այն դժբաղդները, որոնք իրենց պէս մայրիկ մը չունին որ անոր թեւին տակ ճուռղեն, և կամ հայրիկ չունին որ աղաչեն թէ իրենց խաղալիք առնէ Կաղանդին, պտուղ շատ բերէ և անուշապուր եփել տայ։

Մնողներ այս ազնիւ զգացումները անոնց սրտին մէջ զետեղելուն բարեբաղդութիւնը ունեցան. գրդեցին այդ փոքրիկները բարիք գործելու, հոգալու իրենցմէ նուազ բաղդաւորները, այնպէս որ, ալ սովորութեան մը պէս, երբ կաղանդը մօտենայ, տուներու մէջ մանուկներու խնայողութիւնը կը սկսի Հիւանդանոցիս որբերուն և որբուհիներուն համար, որոնց միակ պաշտպանն ու բարերարն է Վեհ. Սուլթանը Որուն առատաձեռնած չնորհներովը կ'ապրին այս անոթ մանկտիքն և Հիւանդանոցիս ամբողջ պատսպարեալները։

Անցեալ տարի, ինչպէս կը յիշուի, 60 ոսկի մօտեցաւ փոքրիկներէ փոքրիկներուն ուղղուած այս կաղանդէքը, որուն ցանկը արդէն հրատարակուեցաւ։ Մանզուսէի մէջ և որ անհուն խնդութիւն պատճառեց ո՛չ միայն Հիւանդանոցիս պատսպարեալներուն, այլ նաեւ բարեսէր ծնողաց, որոնք իրենց զաւակներուն սրտին մէջ բուսնիլ սկսած գթասիրական զգացումները տեսնելով, ա՛լ աւելի քաջալերեցին զանոնք իրարու հետ մրցելու և Որբանոցիս փոքրիկներուն միշտ աւելի վճարելու համար։

Այս տարի ալ ուրախ ենք որ միեւնոյն զգացումով տոգորուած փոքրիկներ սկսած են խրկել իրենց Կաղանդէքը, որուն երախայրիքը ստացած ըլլալով չնորհակալութեամբ հրատարակութեան կուտանք Մանզուսէի Տիկնոջմէ։

(Կնիք Հիւանդանոցի Հոգաբարձութեան)

Նիւթերու առատութեան պատճառաւ նուիրատուութիւններու ցանկը վաղուան թիւով։

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ս. էջմիածնի Կրօնաթերթին վերջին թիւին մէջ հետեւեալները կը կարդանք.

Սեպտեմբերի 24ին կատարուեց Ճեմարանի 30 ամեայ տարեդարձը բազմաթիւ հանդիսականների ներկայութեամբ, որոնք Ս. Էջմիածնայ տօնին պատճառաւ ուխտի եկած էին։

Հանդիսաւոր պատարագից յետոյ, որի ժամանակ երգում էր Կոմիտաս վարդապետի քառաձայն խումբը, Մայր Աթոռիս մաքառութիւնը՝ գլուխ ուսնենալով ծերունազարդ Հայրապետին, Ճեմարանի ուսուցչական խմբի, սաների և բազմաթիւ ժողովրդեան հետ մինչեւ չրջապատեց Ճեմարանի մեծ հիմնադրի ծաղիկների մէջ թաղուած դամբարանը և հոգեհանգիստ կատարեց։ Այնուհետեւ բազմութիւնն ուղեւորեց Ճեմարան, որի արեւելեան ճակատը զարդարուած էր դրօշակներով և կանանչներով, և հէնց բացօթեայ պատրաստուած էր ամբիոն, դրած էին բազկաթոռներ Ս. Հայրապետի, եւ միաբանութեան աթոռներ և նստարաններ հանդիսականների համար։ Հանդէսը բացուեց պատշաճ չարականով, որէ նուագարանների ձայնակցութեամբ ներդաշնակ երգեցին աշակերտները։

Այնուհետեւ Ճեմարանի տեսուչ Պ. Կ. Կոստանեանը կարդաց տարեկան տեղեկագիրը, դրուատեց ուսուցիչների և մանաւանդ Տ. Կոմիտաս վարդապետի գործունէութիւնը՝ որպէս երաժշտութեան և երգեցողութեան ուսուցչի և երախտագիտութեամբ յիշատակեց Ս. Հայրապետի և միաբանութեան խնամքն ու հոգը դէպի Ճեմարանը եւ նրա յարատեւ պահպանութիւնը։ Այնուհետեւ ճառ կարդաց լաւարնցիներից մինը. երգեց եւ նուագեց հայր կոմիտասի երգեցիկ խումբը զեղեցիկ ներդաշնակութեամբ, որից յետոյ միաբանութեան աւագագոյն անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանը, բացատրելով հիմնադրի նպատակը եւ մասնացոյց լինելով ժողովրդին իւր պարտուց վրայ դէպի այդ պատկառելի հիմնարկութիւնը. օրհնեց բոլոր այնտաւորներին եւ փակեց հանդէսը սովորական պահպանիչով։

Հետեւեալ օրը Ծերունազարդ Հայրապետի Ս. Օծման 11րդ տարեդարձն էր։ Ն. Ս. Օծութիւն չաբաթ երեկոյեան հանդիսաւոր կերպով իջաւ Մայր տաճարը, աղօթեց իջման սեղանի առաջ և սկսուեց երեկոյեան ժամերգութիւնը. որից յետոյ Նոյեմպիսի հանդիսով վերադարձաւ Վեհարան։

Ճեմարանում և Ս. Էջմիածնայ բակում այս տարի սովորական լուսաւորութիւնը չկար։

Հետեւեալ օրը պատարագից առաջ նոյն հանդիսով Ն. Ս. Օծութիւն եկեղեցի իջաւ, ներկայ գտնուեց հանդիսաւոր պատարագին և հայրապետական մաղթանքին, որից յետոյ ամբողջ միաբանութիւնը, Ճեմարանի ուսուցչական խումբն ու սաները համբուրեցին Ն.Ս.Օծութեան աջը։ Էջմիածնայ աշնանային եղանակը, պայծառ արեւն ու ջինջ կապուտակ երկինքը, հանդիսաւոր պատարագն ու ներդաշնակ քառաձայն երգեցողութիւնը հաւատացեալներու տօնական տրամադրութիւնն ու բազմութիւնը արտակարգ կեանք էր մտցրել ամէն տեղ։ Այդ օրը ճշգին ներկայ էին բազմաթիւ անձինք։ Ս. Հայրապետը սեղանատուն իջնել չկարողանալով՝ Տ. Գէորգ արքեպիսկոպոսին էր յանձնել սեղանին նախագահելու պատիւը։ Ճաշին խօսուեցին բաժակաճառեր, տեղի ունեցաւ ներդաշնակ երգեցողութիւն եկեղեցական երգերի և ներկայ եղող բազմութիւնը գոհ և ուրախ ցրուեցաւ քաղցր տպաւորութեան ներքոյ։ Երեկոյեան ժամերգութիւնն ու թափորը կատարուեց բացօթեայ դրա համար յատկապէս չինած տեղում, որին ներկայ եղաւ Ն. Ս. Օծութիւնը և անձամբ օրհնեց ժողովրդին։ Այդ օրը բազմաթիւ պաշտօնական անձինք, հիմնարկութիւններ, մասնաւոր մարդիկ, ուսանողներ, առաջնորդներ առանձին հեռագիրներով չատակել էին չնորհաւորել Ծերունազարդ Հայրապետին Ս. Օծման տարեդարձը։

—Նորին Ս. Օծութիւն Ս. Հայրապետը օրհնում և չնորհակալութիւն է յայտնում այն բոլոր հոգեւորական և այլարհական անձանց և հիմնարկութեանց ծառայողներին, որոնք չսակել էին չնորհաւորել Նորին Սրբութեան Օծման 11րդ տարեդարձը և յայտնել իրենց որդիական սիրոյ և անձնուիրութեան զգացմունքները։

* * *

Մեր միաբաններից չնորհազարդ Սմբատ սարկաւագը, որ ուսանում էր Պետերբուրգի արեւելեան լեզուաց բաժնում, սոյն Մայիսին աւարտեց իւր դասընթացը ու պետական քննութիւն տալուց յետոյ արժանացաւ առաջին կարգի տիպլոմի։ Չնորհ. սարկաւագը իւր ուսանողութեան ընթացքում Պետերբուրգի համալսարանի յանձնարարութեամբ կազմել է Նոր-Զուղայի ձեռագիրների ցուցակը, որոնց թիւը հասնում է մօտ 600ի, իսկ այս ամառ կազմել է Նախավկայի գրոց ցուցակը։ Բացի սրանից Պետերբուրգի Աղէքսանդր երրորդի թանգարանի յանձնարարութեամբ կազմել է Նոր-Զուղայի և Խոպանի ազգագրական ժողովածուն և Գանձակի նահանգի ազգագրութիւնը որը դեռ չարունակում է։ Անցեալ տարի սարկաւագ և ժողովել է Ղազախ գաւառի հին արձանագրութիւնները։

* * *

Ս. Սինոդը լսեց Գանձակի Գ. նահանգապետի և Կարսի զինուորական նահանգապետի գրութիւնները, որոնցմով նրանք պահանջել էին ցուցակ յիշեալ նահանգներում եղած պաշտօնական —վանքերի, գործակալների. ծխատէր քահանաների, սարկաւագների և եկեղեցու սպասաւորների. նաև Շամախու կոնսիստորիայի յայտարարութիւնը մայիսի 15ից նոյն խնդրի համար Շամախու գաւառապետից ստացած գրութեան առթիւ և Տ. պրոկուրորի առաջարկութիւնը

այդ խնդրի մասին և որոշեց պատուիրել Ա.) Երևանի Թեմական Կոնսիստորային տալ պատշաճ տեղեկութիւններ Կարսի նահանգի հոգևոր պաշտօնէից մասին. Բ.) Տփխիսի Կոնսիստորիային, որ ուղարկի Գանձակի գ. նահանգապետի խնդրած տեղեկութիւնները և Գ.) Շամախու Կոնսիստորիային՝ կատարել Շամախու գաւառական գրութիւնը և տալ յիշեալ գաւառի հոգևոր պաշտօնէից ցուցակը և այս վիճակը ծանուցանել որոնց պէտք է։

* * *

Սինոդը լսեց Օտար Դաւանութեանց Դեպարտամենտի հետեւեալ գրութիւնը.— 1889 Թուի մարտի 11ին հրատարակած Բարձրագոյն հրամանով կարգադրուած է հետեւեալը. «Հին և հոյակապ կերուածների նորոգութիւնը կատարում է Կայս. Հնագիտական Ընկերութեան և Գեղարուեստից Ճեմարանի հաւանութիւնից յետոյ»։ Ուստի և հին տաճարների կամ եկեղեցական շէնքերի ներքին և արտաքին նորոգութիւնից առաջ նախ պէտք է ստանալ կայս. Հնագիտական Ընկերութեան և Գեղարուեստից Ճեմարանի հաւանութիւնը և ապա մատուցանել նորոգութեան յատակագիծն ի հաստատութիւն։ Հրամայեցին ներքին գործոց Նախարարի յիշեալ գրութիւնն ընդունել ի հրանգութիւն։

ԱՅԳԵՏ ՖՕՆ ԲՈՒՆԳՈՒԼ, երէկ այցելեց Պատրիարքարան և տեսակցութիւն մը ունեցաւ Ս. Պատրիարք Հօր հետ։ Ֆոն Բունդուլ այցելեց նաև Մաբ վարժարանի թէ տղայոց և թէ աղջկանց բաժինը և զանազան դրամական նուէրներ բաժնեց յայողով տարբերներու, ինչպէս նաև 2 օսմ. ոսկի նուիրեց Մանկապարտէզի բաժնին իրեղէններ գնելու համար։

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷ գրուեցաւ Տրապիզոնի առաջն. տեղապահին, որպէս զի առաջնորդ Տ. Ներսէս եպս.ի ճանապարհածախսը ղրկեն, քանի որ մէկ քանի օրէն կայս. Ֆերմանը պիտի ստացուի Բ. Դռնէն։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ կոնդակ մը ղրկուեցաւ Վանայ առաջ. տեղապահ Տ. Մեսրոպ քհ. Ճանիկեանի, որով Սահակ եպս.ի մահուան առթիւ ցաւակցութիւն յայտնելով կը պատուիրէ Մայր Աթոռ վերադարձնել հանգուցեալին մասին, վարդապետական խաչը և եպիսկոպոսական Պակէտն։

ՎԻԼՅԱՆԻ ԵՒ ԻՄԷՐԷԹԻ Հայոց առաջնորդ Տ. Գարեգին եպս. Սաթունեանի պաշտօնը հաստատուեցաւ Ս. Հայրապետին կողմէ։

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎԸ երէկ գումարուեցաւ Պատրիարքարանի մէջ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և զբաղեցաւ ամուսնական խնդիրներով։

ԴԻՒԱՆՆԵՐԷՆ կուսակալներ և միաբէթարբեներ շնորհակալութեան քառեր և նամակներ ղրկած են Ս. Պատրիարք Հօր, որ Պայրամի ծանր շնորհաւորած էր։

ՏԻԿ. ՄԱՔՐՈՒՀԻ ԻԲՐԱՆՈՍԵԱՆ իր անձնական տկարութեան պատճառաւ իր հրաժարականը տուած է Հիւանդանոցի Խնամակալութեան անդամակցութենէն, այս առթիւ իր շնորհակալութիւնը յայտնելով Հոգաբարձութեան անդամոց. իր պաշտօնին կիրառմանց մէջ տրուած դիւրութեանցը համար և Խնամակալութեան որ սիրայօժար ընդունեց իր գործակցութիւնը։

ՆՊԱՍՏԻՑ յանձնաժողովը երէկ գումարուեցաւ Ղալաթիոյ Խորդուբանին մէջ Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ի ներկայութեան միւս անդամներուն։ Յանձնաժողովը մէկ քանի առաջնորդարաններէ եկած նամակները կարդաց, որոնք նպաստի խնդրանք կընէին և որոշեց կարելի եղած նպաստը ընել։

Տ. ԵԶՐԱՍ ՎՐԴ. ՍԱԶԼԵԱՆ, երեք ամսուան արձակուրդ խնդրած էր Ս. Պատրիարք Հօրմէն, իր ծննդավայրը Ռօտոսթոյ և անկէ Մալկարայ երթալու համար։ Ս. Պատրիարք Հայրը արտօնեց։

ՈՒՍՈՒՑՉԱՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ Մնտուկին Հոգաբարձութիւնը իր ամսական նիստը գումարեց երէկ Ղալաթիոյ Խորդուբանին մէջ։ 1. Հոգաբարձութիւնը գոհութեամբ տեղեկացաւ որ Սրամ էֆ. Գարամանեան ի նպաստ Մնտուկին ստացած էր Ղալաթիոյ և Բերայի աղգայիներէ ոմանց իրը 15 ոսկիի չափ նուէրները, ինչպէս արտօնուած էր Պատրիարքական գրով մը, և իր շնորհակալութիւնը յայտնեց թէ՛ նուիրատուներուն և թէ նուիրատու ազգայնոց։ 1. Մէկ քանի ուսուցիչներ և ուսուցչուհիներ խնդրագրով նպաստ կը խնդրէին. Հոգաբարձութիւնը ուշադրութեան առաւ դանոնք և նկատելով որ անոնցմէ մին 10 տարիներէ ի վեր քաջուած էր ուսուցչական ասպարէզէն և թէ միւսները մասնաւոր նպաստի գումարներ կը խնդրէին, որոնց մասին կանոնագրին մէջ արամադրութիւն մը չկար Հոգաբարձութիւնը ստիպուեցաւ անհետեւանք թողուլ այդ խնդրանքները։ Հոգաբարձութեան յաջորդ նիստը տեղի պիտի ունենայ Փետրուարի մէջ։

ՎԱՂՂ Ս. Աստուածածնի յԱննայէ Ցաւութեան տօնին առթիւ, նոյն օրը Պատրիարքարանի մէջ կատարուելիք նշանախօսութիւնները, շաբաթ օր պիտի կատարուին։

ԵՐԶՆԿԱՑԻ Տիկին Հռիփսիմէ Շահպազեանի յուղարկաւորութիւնը կատարուեցաւ երկուշաբթի օր Բերայի մէջ։ Հանգուցեալ Տիկինը բարի և աղքատաբեր կին մըն էր և քանի մը տարի առաջ Շիլլիի Ազգ. գերեզմանատուն նուիրած էր իր տան բաժինը՝ 35 օսմ. ոսկի։

ՀՍԹ. ՀՌՈՄԷԱԿԱՆՆԵՐԻՆ.— Կ. Պատրիարք Տ. Սապպաղեան Սրբազան շաբաթ օր Կայս. Պալատ երթալով այցելեց Վեհ. Իրադէթ փաշայի։

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Ատենէ մը ի վեր Կրօնական Հանդէսի մը պէտքը կը շեշտուէր Պոլսոյ մէջ. և Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, որ կ'ուզէր այս պէտքին գոհացում տալ. բանակցութեան մէջ կը գտնուէր Լոյսի արտօնատէր Տ. Վահան Մ. Վրդ. Տէր-Մինասեանի հետ, Լոյսը Կրօնական Հանդէսի մը վերածելու համար։ Այս անգամ կը լսենք որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր այս փափաքը իրագործուած է և Լոյս շաբաթաթերթը յառաջիկայ 1905 տարւոյ Յունվար 1էն սկսեալ պիտի հրատարակուի իբրեւ Կրօնական Հանդէս Ն. Ամենապատուութեան վերին հսկողութեամբ և վարդապետներու աշխատակցութեամբ։ Առաջին թիւին մէջ, որ հրապարակ պիտի ելնէ 1905 Յունվար 1ին, ըստ առաջնոյն Տէր-Մինասեան տպարանէն, Ս. Պատրիարք Հայրը խմբագրական յոդուածով մը կրօնաթերթ Լոյսի ուղղութիւնը կը գծէ, որով կը յայտնուի թէ Լոյս պիտի պարունակէ յոդուածներ կրօնական, բարոյական, և դաստիարակական հարցերու վրայ. ինչպէս նաեւ եկեղեցական արարողութեանց, ընտանեկան սրբութեանց, որդիական և ծնողական պարտաւորութեանց վերաբերեալ ևն. ևն.։ Ն. Ամենապատուութիւնը այս յոդուածով կը յանձնարարէ Լոյսի խմբագրութիւնը ինչպէս նաեւ աշխատակցութիւնը սանձնող վարդապետներուն, որպէս զի «միայն ժողովրդեան պէտքին հետեւին քան իրենց ճաշակին», օգտակարին քան հաճոյալիին»։ Կը լսենք թէ Ս. Պատրիարք Հայրը գաւառական բոլոր Առաջնորդներու յատուկ պաշտօնագիրներ ղրկած է որպէս զի ուժ տուի կրօնաթերթ Լոյսի ծաւալման։ Կ'ըսուի թէ բարեսէր անձնաւորութիւն մը, որ անծանօթ մնալ կուզէ, յանձնառած է Լոյսի նիւթական ժառանգաւորութիւնը։

×

Միւս կողմէ, Լոյս շաբաթաթերթին կրօնաթերթ ըլլալուն պատճառաւ, Լոյսի արդի տնօրէն Վահան էֆ. Փափազեան ստանձնած է Տնօրէնութիւնը Հանրագիտակի, որ 1905 Յունվար 1էն սկսեալ պիտի հրատարակուի խմբագրական այն նոյն մարմինով և ուղղութիւնով, որով ցարդ կը հրատարակուէր Լոյսը։ Հանրագիտակի առաջին թիւը որ հրապարակ պիտի ելնէ Կաղանդին, բացառիկ թիւ մը պիտի ըլլայ 3 ղրուշ գինով և պիտի պարունակէ քսան ծանօթ և սիրուած գրիչներու յօդուածները, ինչպէս նաեւ Լիլիի պատկերը։ Երկրորդ թիւէն Հանրագիտակ պիտի սկսի հրատարակուիլ արդի Լոյսի նման 16 էջերով և մէկ ղրուշի իր սովորական գինով։ Այս հաշուով Վահան էֆ. Փափազեանի հրատարակած Լոյսի բաժանորդները պիտի շարունակեն կարդալ իրենց սիրած նիւթերը փոխանակ Լոյսի Հանրագիտակի մէջ, եզածը անունի պարզ փոփոխութիւն մը ըլլալով։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Տէր Խմբագիր

Հաճեցէք հետեւեալը տեղաւորել Ձեր Պատ. լրագրին մէկ անկիւնը՝ Ցոյն կղերականութեան մեզ նկատմամբ տածած խուլ մոլեռանդութիւնը յայտնելու համար։

Մանասթիրի կառավարական Հայ պաշտօնեաներէն միոյն մայրը, իբր ուղղափառ եկեղեցւոյ բարի զաւակ, մահամերձ վիճակի մէջ, իր անկողնոյն քով արտասուաթոր աչքերով հսկող զաւակներէն կը խնդրէ որ Հաղորդութիւն մը տրուի իրեն։ Վերջին վայրկեաններուն հասած սիրելի մօր մը սոյն խնդիրքը աճապարանօք կը կատարուի և առ ի չգոյէ հայ քահանայի, յոյն քահանայ մը սոյն պէտքը կը լրացուցնէ։

Սակայն, խնդիրը հոս է արդէն, տեղւոյն յոյն առաջնորդը նոյն բարի քահանան կը հրաժարեցնէ իր պաշտօնէն՝ միայն և միայն այն ամենամեծ և ամենի յանցանքէնէ համար զոր գործելու յանդգնած էր հայ ուղղափառ եկեղեցւոյ զաւկի մը հաղորդութիւն տալով։

Ահա երկու քոյր եկեղեցիներու բարի յարաբերութիւնները!։

Եւ լրագիրներու մէջ կը կարդամ միշտ թէ այսինչ հայ երիտասարդը օտարազգի աղջկան մը հետ սիրահարուած՝ զայն իր կնութեանը կ'առնէ. վա՛յ անոնց ապագային։

Քիչ մըն ալ մեր աշխարհաքաղաքացիութեան թեթեւ հովը մէկ կողմ թողլով՝ լրջօրէն զմեզ, մեր եկեղեցին, մեր կրթական և ընտանեկան յառաջդիմութիւնը մտածենք։

Մտածեցէք թէ, յոյները ինչպէս ուրիշներ առ ոչինչ կը համարին մինչեւ իսկ կրօնապէս։

ՏՓԹ. Ա. ՈՒՆՃԵԱՆ

Ձ. Նոյմ. 1904

Օխրի

ԾԽԱՎՎԱՃԱՌ ԱՊԱ

Մեծ Շուկային, Զաքմաքճիլարի և Պոլսոյ կողմի հրապարակին մէջ ծանօթ խեղճ հաշմանդամ ծխավաճառ մը, որուն «Ապա» մականունը կը սրբուէր. անցած շաբթու չուկային մէջ յանկարծական կերպով գետին զլորուցաւ և քիչ ետք իր վերջին շունչը փչեց։ Յանկարծամահ ծխավաճառին յուղարկաւորութիւնը կիրակի օր կատարուեցաւ Մայր-Եկեղեցիին մէջ։ Հաշմանդամ, բայց իր ընտանիքին և հինգ զաւակներուն հացը ճարելու համար փողոցէ փողոց թափառող այս դժբաղդ հայրը, հիմա որբ և անտէր կը ձգէ զանոնք։ Հետեւաբար կը խնդրուի որ ամէն անոնք որ պարագ ունէին Ապային, զայն յանձնեն Գալաթագըլար Պալի. ֆէնճի Սեպուհ աղայի և հոն գտնուող տեսարանին մէջ արձանայրեն իրենց անունը, որպէս զի այդ դրամներով փոքր նպաստ մը ըլլայ անտէր մնացած ընտանիքին։

ՄԱՆԶՈՒՄԷԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

ԶԱՓՍՆՓՔ

Երկուշաբթի դեկտ. 6 ժամը 7ին, Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիին մէջ վայելուչ հանդէսով կատարուեցաւ պսակադրութիւնը ԵՐՈՒԱՆԴ ԷՖ. ՏԷՐ ՅԱԿՈԲՈՍԵԱՆԻ, ՕՐ. ԶԱՐՈՒՀԻ ԷՊԵՆԵԱՆԻ հետ, կնքահայրութեամբ Պ. Գէորգ Ա. Բէօմիւրճեանի (որդի Արտաչէս էֆ. Բէօմիւրճեանի. գրաշարապետ Առեւտր. Սենեկի լրագրոյ), ի ներկայութեան երկու կողմի ազգականաց և բարեկամաց, որոնք իրենց շնորհաւորութիւնները ժառուցին նորապսակ զմլին։

×

ՄԱՀԵՐ

ՔԷՇԻՇԵԱՆ Տպարանի Ա. մեքենավար Միհրան էֆ. Մելիքեանի կինը Տիկ. ԱՂԱՒՆԻ Մ. Մելիքեան երէկ մեռաւ Լանկայի բնակարանը, 38 տարեկան հասակին մէջ։ Յուղարկաւորութիւնը պիտի կատարուի վաղը ժամը 7ին, Մայր Եկեղեցիին մէջ։ Հանգուցեալ Տիկինը մօտաւոր ազգական է Պարսկաստանի առաջնորդ Տ. Սահակ արք. Այվազեանի և նախկին ոսկերչապետ Գուրեան Միքայէլ աղայի։

×

ՀԱՆԴՈՒԻՑԵԱԼ Ստեփան փաշայի քեռայր և Տ. Եղնիկ վրդ. Պապաեանի Հայր, Յարութիւն աղա կնքեց իր մահկանացուն, Բանկալթիի բնակարանը, 91 տարեկան հասակին մէջ։

ՏՈՒՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿ

ՀԱԳ., ԳԱՂ., ԹՈՒՐՔ. լեզուաց և գիտութեանց հմուտ երիտասարդ մը տան մէջ դաստիարակի պաշտօն կը խնդրէ։ Լաւագոյն երաշխաւորութիւնք։ Դիմել Մանզումէի խմբագրատունը,

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ

Կ. ՊՈԼՍՈՅ

(1904 7 Դեկտեմ. Գշ.)

ՑՈՐԵՆ

Ձերմակ Առաջին օխան	37½ փարա
» երկրորդ »	36½-37 »
Մախլութ »	33-34 »
Զավտարը »	31-32 »
Սէրթ առաջին, օխան	34-35 փր.
» միջին տեսակ	31½-33 »

Այսօր ժամանեց 33 վագոն ցորեն Ա-նատոլ։

ԱԼԻՒՐ

Տեղական քերմա Ա. պարկը	72-73 ղշ.
» » Բ. »	68-70 »

ԹԵՓ

Օխան 18¾—19 փարա։

ԳԱՐԻ

Բէօստէնճէ	11½—11¾ ղրշ. գրիւը
Մերսին և Ռումելի	10½—10¾ »

ԲԱՐԻԶԻ ՊՕՐՍԱՆ

BOURSE DE PARIS

20 Դեկտեմբեր 1904

Ֆրանս. 3% Français)	97 60
Ռէժի (Tab. Turcs)	355 —
Օսմ. Միացեալ (R. Nv. Unif.)	88 15
Ելկաթուղի (Lots Turcs)	126 75
Պանք Օթթ. (Banque Ott.)	591 —
Թրանսվալ (Transvaal)	109 —

ՐԷՍՄԻ

ՔԷՎՃԻՀԱՔ

Վազիֆէի մէմուրիյէթինի հիւանը լիֆա իլէմէքտէ օլմասընա մէպնի տէֆթէրը խագանի իսթաթիսթիգ գալէմի քէթէպէսինտէն ֆիւրուվէթլու Հիւսնի էֆէնտիյէ բիւթպէի Բապէ թէվճիհ պույրուլմուշ սրը։

ՆԸՇԱՆ

Պանգ Օսմանի Իսթանպոլ շիւպէսի թանվիլաթ մէմուրը միւսիւ Լէօն Դուրտաժիյէ իշիւնճի բիւթպէտէն մէճիտի։

Իզմիր Ֆրանսըզ գոնսոլոսխանէսի թէրճիմանը միւսիւ Հայկ Սիմոնեանա իշիւնճի բիւթպէտէն Մէճիտի նշանը զիշանլարը իհսան պույրուլմուշ սրը։

ՆԵՐՔԻՆ

ՀԱՆԴՍՏԵԱՆ ԹՈՇԱԻ ՍՆՏՈՒԿԸ.— Ինչպէս անցեալ տարի այս տարի ալ մասնաւոր պաշտօնատար մը պիտի ընէ պետական պաշտօնարաններու բոլոր տոմարները, հասկնալու համար հանգստեան թոշակի անուշկին եկող գումարներուն ճիշդ թիւը։ Այս միջոցին նպատակն է պետական այս հաստատութեան գործառնութեանց կանոնաւորութիւնը ապահովել, պետական պաշտօնարաններու հասոյթներէն հանգստեան թոշակին յատկացուած մասերը իրենց ժամանակին հատուցանելով։

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.— Բեթերսպուրկէն կը հեռագրեն.— Պարսից Շահին պատուիրակը, Պոլսոյ դեսպան Իլխան Միրզա Ռիզա Խան դեռ հոս կը գտնուի։ Նիքոլա Զարը և Զարուհին իլխանին նուիրեցին իրենց լուսանկարները արծաթաքանդակ և 17րդ դարու ռուս ոճով կիսուռածանկար չքեղ շրջանակով մը։

ՄՐՑԱՆԱԳԱՌՇՈՒԹԻՒՆ.— Կայս. Միլքիէ վարժարանին, Մէրճանի և Վէֆայի Իտատիյէներուն մրցանակաբաշխութեան և Կայս. Համալսարանին այս տարուան շրջանաւարտներուն հանդէսը կատարուեցաւ առջի օր, Միլքիէ վարժարանին մեծ սրահին մէջ։ Նախ տեղի ունեցաւ Մարգարէին Մենդելսն Գիրքին ընթերցումը։ Ժամը 9ին հասան Կայս. Պալատան քարտուղարներէն Ճէվատ պէյ և կրթական նախարար Հաչիմ փաշա։ Կայս. պատուիրակ Ճէվատ պէյ բոլոր ուսուցիչներուն եւ ուսանողներուն աւետեց Վեհ. Սուլթանին բարեւները և առաջին ու երկրորդ հանդիսացողներուն անձամբ յանձնեց շնորհուած կրթական ոսկի և արծաթ չքադրամները։ Միլքիէ վարժարանին և Կայս. Համալսարանին անօրէն Ռէճայի պէտի բարեմաղթական մէկ ճառէն վերջ, բաժնուեցան ոսկի ժամացոյցներ իբր մրցանակ և վկայականները։ Միլքիէ վարժարանը այս տարի 41 շրջանաւարտունի, որոնց 39ը իսլամ են և երկուքը յոյն։ Իսկ Կայս. Համալսարանին 25 շրջանաւարտներէն 24ը իսլամ են և մէկը հայ, Ստեփան էֆ., որ չափազանց գիտութեանց մէջ երկրորդ հանդիսացած է։

ՊՈՒԼԿԱՐԻԱ.— Ֆէրտինանտ իշխանին անձնական գանձը մէկ միլիոն ֆրանք որոշուեցաւ, որուն ¾ միլիոնը իշխանական ապարանքներուն համար։ Ֆէրտինանտ իշխանին փափաքով Պորիս իշխանին յատկացուած վարկը մէկ կողմ թողուեցաւ, որովհետեւ իշխանը դեռ անչափահաս է։

ՐՈՒՄԷԼԻԻ ՄԷՋ.— Պոլսէն կը հեռագրեն «Թան»ի թէ կայս. Իրատէ մը հրամայած է դարձեալ դրամական նպաստներ բաժնել Մանասթիրի և Էսքիշէհիր կարօտ գիւղացիներուն։

ՆՈՐ ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒԻՐԱԿ.— Հռոմէն կը հեռագրեն թէ Վատիկանի արտաքին գործոց նախարարութիւնը պաշտօնապէս Պոլսոյ Պապական նուիրակ անուանեց հանգուցեալ Մօնս. Պենէթիի տեղ, Զիթթա Տէլլէ Բիովէի Եպիսկոպոս Մօնս. Թաչչի Բարչէլլին։ Նոր նուիրակը 41 տարու է դեռ և 1895էն ի վեր կը վարէ Զիթթայի եպիսկոպոսական փոքր թեմը, որ Հռոմի և Ֆիորէնցայի միջեւ երկաթուղիի գիծին վրայ կը գտնուի։

ԱՏԱՆԱՑԻ կուսակալ Պահրի փաշա, Կայս. գոհունակութիւններու արժանացաւ, Եկմտական Դանձին անհրաժեշտ ծախքերուն յատկացուած գումարներուն մնացորդը իր որոշ ժամանակին ղրկած ըլլալուն համար։

ԱՌԵՒՏՐ. ՍԵՆԵԱԿԻՆ նախագահ Պետրոս էֆ. Ագարեան և եղբայրը Յովսէփ էֆ. առջի օր Քորֆու մեկնեցան։

ԽՈՋԱԼԻՆԻ ԲԵՐՔԸ.— Այս տարի Անատոլուի մէջ խոզկաղինի բերքը 1,040,000 կենդինար կը գնահատուի։ Անցեալ տարի 1,340,000 կենդինար էր։ Սակայն այս տարի բերքը գոնով, ծանրութեամբ և տեսակով ընտիր է։

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՌՋԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀՐԴԵՀԸ.— Երէկ գրած էինք թէ առջի գիշեր հրդեհ ծագած է Օրթագիւղ, Թաշ Մէրտիվէն փողոց և այրած է Սարգիս էֆ. Ծնորքլեանի սեփական քարուկիր մեծ շէնքը։ Այս շէնքին մէջ հաստատուած էին Պուլկարաց Էկզարքարանին գիւանները. քանի որ Էկզարք Տ. Եսայի տան դէմը կը գտնուէր։ Բոցերը սկսան վերի յարկէն, կ'ըսուի թէ վառարանի արկածի մը հետեւանքով։ Այ-Նիքոլայի տօնին առթիւ դիւանատունը գոց էր։ Կրակը կ'երեւի թէ երկար ատեն տարածուած է ներսը, մինչեւ որ լոյսը տանիքէն տեսնուեցաւ և երբ հասան, արդէն շէնքը գրաւուած էր բոցերէն։ Էկզարքարանին պաշտօնեաները կրցան պատուհաններէն դուրս նետել տոմարները և վաւերաթուղթերը պարունակող արկղները։ Մատենադարանը և դիւանական պաշտօնաթուղթերուն մէկ մասը այրեցան։ Շէնքը ապահովագրուած չէր, բայց կարասիները Պոլքանի ապահովագրուած էին 10000 ֆր.ի։ Հրշէջ զօրաց ջանքերուն շնորհիւ բոցերուն ճարակումն զերծ պահել կարելի եղաւ յարակից Քատրի պէյի և Թօփհանէլեան էֆ.ի տուները։

*** Իզմիրի թերթերը հետեւեալ դէպքը կը պատմեն.— Կուսակալ Բեհմիլ փաշայի որդին Կայս. թիկնապահ Սայիտ պէյ շաբաթ գիշեր թատրոնէն դարձաւ և պառկեցաւ ննջարանին վառարանը վառել տալէ ետք։ Քիչ ետք արթնցաւ սարսափահար, և տեսաւ որ սենեակը ծուխով լեցուն է և անմիջապէս դուրս նետուեցաւ. շնչահեղձութեան այս վտանգէն որ ազատելի հետեւանքներու հանելու քիչ կ'ուզէր։ Այս միջոցին բոցեր տեսնուեցան քօնաքին մէջ և քիչ ժամանակէն ամբողջ շէնքը քանդուեցաւ իր կարասիներով։ Վնասները 10,000 ոսկին կ'անցնին։ Շէնքը և կարասիները զանազան ընկերութեանց ապահովագրուած էին 10000 ոսկիի։ Կարասիներուն մէջ կայ եղեր նկար մը որ միայն 1000 ոսկի կ'արժէ եղեր։

ԱՆԶՆԱՍՊԱՆՆԵՐ.— Պէօյիւքտէրէի «Կամպէթթա» պանդոկին վարձակալը Ֆրանսահպատակ Մ. Բիէռ Կամպէթթա առջի իրիկուն Շիշլիի լատինաց գերեզմանատան մէջ բէվոլվէրով անձնասպան կ'ըլլայ։ Պատճառը յայտնի չէ։

*** Նոյն օրը, Ղալաթիա, աբարթման մը բնակող անգլիահպատակ Էրնէսթ անուն մէկը ածելիով մը կոկորդը կտրեց անձնասպանութեան մտօք։ Էրնէսթ ծանր վիճակի մէջ հիւանդանոց տարուեցաւ ուր մնաց։

ԹԵՐԹԵՐԸ ԳՐԱԾ ԷԻՆ թէ Գատրգիւղցի Թագւոր աղա յոյն ապառուհիի մը հետ յարաբերութիւն ունեցած է, անհաճոյ եղրակացութեան մը յանգեցընելով իր յարաբերութիւնները։ Սկիւտարի Նախագահ ատենը այս խնդիրը քննելով իր 320 թիւ և դեկտ. 6 թուակիր վճռագրով մեռնիլ մուհաֆէզի որոշում տուաւ նկատելով որ տրուած բժշկ. վկայագրին համեմատ յիշեալ ապառուհին նախապէս կորսնցուցած էր ինչ որ կը պահանջէր Թագւոր աղային։

ՑԱՑՁՆԱԿԱՏԱՐԻ ՄԸ ՓԱԽՈՒՍՏԸ.— Քօմիսիոն խան հաստատուած յանձնակատար Տէօվլէթեան էֆ. որ վերջերս ինքզինքը Քօնսօլիա խաղալու տալով, իր կարողութենէն վեր գործերու ձեռնարկած և 4-500 ոսկիի պարտք մը գոյացուցած էր, իր պահանջատէրները ազատելու համար անյայտ եղած է։ Պահանջատէրները թէեւ սենեակը կը դիմեն բայց գոց գտնելով կը տեղեկացնեն ոստիկանութեան որ քննութիւն մը բացած է։

ԿԱՐԵՒՈՐ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՄԸ

«Հակառակորդներէս չեմ վախնար, բարեկամներէս ազատէ զիս» ըսուած է։ Հաւատի եղէք որ չատ ճիշդ է այս խօսքը։ Վատահ եղէք որ Հընդկատանի և Ճավայի գաղանաշատ մացառներու և եղէգնուտներուն մէջ, մարդ աւելի ապահով պէտք է զգայ ինքզինքը, քան կեղծ բարեկամներու, և «երեսիդ ուտ-խնդացողներու» մէջ։ Այս վերջինները չատ աւելի դէշ... կը խածնին կամ կը խայթեն քան կոկորդիլոսները և օձերը։ Վերջերս պատահած քանի մը հովանոցավաճառներու անանկութեանց —որոնցմէ ոմանք ուրիշներու զոհ գացած են— առթիւ, մէկէ աւելի բարեկամներս ցախանձէ կամ գձուձ մտածումներէ թելադրուած զիս ալ իբր այդ անանկութեանց հետ առընչութիւն ունեցող ներկայացնելով, վարկաբեկ ընել նկրտած են։ Տեղ մը, որպէս թէ՝ իրենք չատ մօտէն տեղեակ են ցուցնելով, ուրիշ տեղ կեղծուպատիր դարձուածքներով կասկածայարոյց խօսքեր զլտորելով ու այսպէս «պղտոր ջուրին մէջ ձուկ որսալ» ջանալով։ Բայց ամէն ձուկ պղտոր ջուրին մէջ ալ չբռնուիր։ Որպէս թէ առանձրման ըրեր եմ ուղեր (?) քսմիսիոնցիներու հետ ուայլն. ուայլն։ Բայց ահա ներկայիս կը յայտարարեմ թէ՝ ո՛ր քսմիսիոնցին որ հաստատէ թէ ո՛ եւ է զեղչ ըրած եմ, պատրաստ եմ պահանջքին կրկինը հատուցանելու, միեւնոյն ատեն հրապարակելով թէ՝ վճարօրը հասած կամ չհասած թուղթերս, պատրաստ եմ անմիջապէս վճարելու. սակայն այս առթիւ չպիտի ալ վարանիմ հրապարակաւ ըսելու, զրպարտիչներու երեսին «Դո՛ւք... քսուի և բանարկուի տիպարներ էք»։

ՄԻՀՐԴԱՏ ՀԱՅԿԱԶՆ

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Երէկ գիշեր ուշ ատեն Հեռագրական Գործակալութեանց կողմէ մեզ հաղորդուած են հետեւեալ հեռագիրները.—

ԼՈՆՏՈՆ, 20 դեկտեմբեր.— Թոքիոյէ հասած հեռագիրներու նայելով, Ճաքոն-իք արիւնաթեր եւ սաստիկ կռիւ մը եղաւ յորձակմամբ գրաւեցին Բորթ Արթուրի հիւսիսակողմը գտնուած Թուքլանանի բերդը ուրիշ բերդ եւ ձեռք անցուցին եօթը թընդանօթ։

ԲԱՐԻԶ.— Պալթիկի նաւատորմը Բէյրթաունի (Բարեյոյս) առջեւէն անցաւ եւ կ'ուղղուի դէպի Արեւելք։

— Բեթերսպուրկէ կը հեռագրեն թէ պաշտօնական շրջանակներու մէջ, միջնորդութեան նոր զրոյցներուն մասին սա յայտարարուած է թէ Ռուսիա ամէն ատենէ աւելի որոշած է պատերազմը մղել առանց կասելու։

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Հոգաբարձութիւնս շնորհակալութիւն կը յայտնէ հետեւեալ ափրիկէ արհեստաւորաց որոնք իրենց բարի սովորութեան համաձայն հոկտեմբեր ամսոյ մէջ այցելելով Հիւանդանոցս անձնուիրաբար սափրած եւ ածիլած են պատսպարեալները եւ Ս. Ցակոբայ որբերը։ Թոքգաբուէն Գարեգին Թագաթեան, Պահճէգաբուէն Ներսէս Ցարութիւնեան եւ Սիմօն Թօքմեան, Պալի Բայայէն Արմենակ, Բերայէն Գառնիկ Ց. Քիլէրճեան, Պալաթէն Գէորգ Թոքճեան, Դուժգաբուէն Նիքոլայաքի Եանի Աղաճան, Մահմուտ Բայայէն Պետրոս Յովհաննէսեան, Սամաթիայէն Համբար Հալէպլեան, Համբար Ցարութիւնեան։

ԲԱՄԲԱԿ ԵՒ ՑՈՐԵՆ

ԼԻՎԼԲՈՒԼ, 19 Դեկտ.

Բամբակի հրապարակը բացուեցաւ.

Յունվ. — Փետր.	4.17
Մարտ — Ապրիլ	4.25 քիչ գործ կայ
Մայիս — Յունիս	4.31
Յուլիս — Օգոստ.	4.35

Ցորենի հրապարակը գոցուեցաւ.

Նիւ-Եորք	Դեկտ.ի համար	117⅛
Լիվրբուլ	Մայիսի »	7/3/1/8
»	Մարտի »	7/3/ 1/4
Շիքակօ	Դեկտ.ի համար	109¾

ԱԱԿԱՐԱՆ

ԶԱԼԱԹԻՈՅ ՕՍԿԱՐԱՆԸ

7 20 Դեկտեմբեր 1904

ՕՍՄ. ՄԻԱՑԵԱԼ

Երէկ իրիկուն գոցուեցաւ	95.05
Ամէնէն բարձր գինը	95.07
» վար գինը	94.38

ՐՈՒՄԷԼԻԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երէկ իրիկուն գոցուեցաւ Ֆր.	125.—
Երէկուան բարձր գինը	125.12
» վար »	125.—
Բրէսի Ֆօնսիէ Էմիրսիէն Ա	292.—
» » » Բ	268.75
Քարտի	523.
Պանք Նաս. Կրէս.	427.—
Թրամվայի Բաժնեթուղթ	6.30
Բէյճի պարտաթուղթ Ֆրանք	358.—
Անատօ. Երկ. բաժնեթ. Ա.Ռ.	12.02
Օսմ. Ապահովագր. Էնկ. Լ. Օ.	4.05

ԴՐԱՄՆԵՐՈՒ ԸՆԹԱՑՔԸ

Օսմ. ոսկին 100 ղշ.էն	ղշ. փր.
Մէճիտիէ արծաթ	103.11
Անգլիական ոսկի	110.—
Ֆրանսական ոսկի	87.16
Քրիմից	51.05
Նոր մէճիտիք	103.—
Բոլ	89.30
Ռուպլի թղթադրամ	8.50
Լոնտոն 3 ամիս	111.—
Բարիզ »	22.67½

ՄՕՍԿՎԱՅԻ ԹԱՏՐՈՆ

ԲՈԼՈՐ ՏԻՊ ԲԵՐԵԼԻՍ

ԱՐՎԵՍՏԱՎՈՐ ԱՆՏՈՒՐ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՍՏԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍ

ԱՌ

ԱՐՈՒԵՍՏԱՎՈՐ ԱՆՏՈՒՐԻ ՄՈՒՏ

ԱՐՎԵՍՏԱՎՈՐ ԱՆՏՈՒՐԻ ՄՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌՈՒՍՏԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍ

ԱՌ